**Արձանագրություն N 2**
**ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

20 հոկտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Ծառուկյանը (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ Բ. Զաքարյանը, Գ. Մելիքսեթյանը, Ա. Սիմոնյանը, Ն. Ավետյանը, Մ. Վարդանյանը և Ս. Ալեքսանյանը

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հայտերի բացման վերաբերյալ**

---

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճիի և Աստղաձորի, ՀՀ Արմավիրի մարզում Քասախի, ՀՀ Վայոց ձորի մարզում Ելփինի, ՀՀ Սյունիքի մարզում Լիճքի ջրամբարների կառուցման և ՀՀ Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի վերակառուցման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի հոկտեմբերի 3-ին, ժամը 16:00-ին:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

**Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.**

---

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 27.09.2022թ. ստացել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 29.09.2022թ. տրամադրել պարզաբանում՝

**Հարցադրում N 1** Ժամկետի երկարացման խնդրանք

Անդրադառնալով «ՀՀ մեծ և փոքր ջրամբարների կառուցման/ վերակառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում» ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով բաց մրցույթի հրավերին և Պատվիրատուի պահանջների համաձայն մրցութային առաջարկների ներկայացման համար սահմանված ժամկետին՝ շատ երախտապարտ կլինեինք, եթե առաջարկների ներկայացման ժամկետը կարողանայիք երկարացնել 15 օրով:

Այն մեզ հիանալի հնարավորություն կտա ավարտին հասցնել ներկայացվելիք մանրամասն և ճշգրիտ փաստաթղթերի փաթեթի կազմումը՝ մրցութային փաստաթղթում սահմանված դրույթների համաձայն:

**Պարզաբանում N 1** ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգը բաց մրցույթ է, որը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն և հայտերի ներկայացման ժամկետը սահմանվել է 33 օրացուցային օր: Մրցույթի ժամկետի փոփոխումը հնարավոր չէ, հաշվի առնելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրությունը:

**ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

| Մասնակցի անվանումը | հասցե, | էլեկտրոնային հասցե |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| | հեռախոսահամար | |
| «Մոդուլ ՍՊԸ | ՀՀ, ք Երևան, Նաիրի Զարյան 22-3, հեռ. (+374) 11 201-511 | info@modul.am |
| Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերություն /AbanPazhouh Consulting Engineers Compan/ | համար 175 Դադման պողոտա, Շահրաքէ Ղարբ շրջան, Թեհրան, Իրան հեռ. +98-21-88368593, 094766332 | **info@abanpazhouh.ir** aban_pazhouh@yahoo.com |
| ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Վաղարշյան 12ա, հեռ. (+374)261298, 091404528. | gidepinvest@mail.ru |

**Մասնակցի (ների) գնային առաջարկը**

ՀՀ դրամ

| | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| | **Չափաբաժին 1** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճի և Աստղաձոր ջրամբարների կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ | | | |
| 1 | «Մոդուլ ՍՊԸ | 233 250 000 | 46 650 000 | 279 900 000 |
| 2 | **Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերություն** | **92 400 000** | **18 480 000** | **110 880 000** |
| | **Չափաբաժին 2** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Արմավիրի մարզում Քասախի ջրամբարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ | | | |
| 1 | **«Մոդուլ ՍՊԸ** | **150 000 000** | **30 000 000** | **180 000 000** |
| 2 | **Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերություն** | **118 800 000** | **23 760 000** | **142 560 000** |
| 3 | **ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ ՍՊԸ** | **104 000 000** | **20 800 000** | **124 800 000** |
| | **Չափաբաժին 3** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ | | | |
| 1 | **«Մոդուլ ՍՊԸ** | **133 250 000** | **26 650 000** | **159 900 000** |
| 2 | **Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերություն** | **68 200 000** | **13 640 000** | **81 840 000** |
| | **Չափաբաժին 4** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ | | | |
| 1 | **Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերություն** | **67 760 000** | **13 552 000** | **81 312 000** |
| | **Չափաբաժին 5** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Սյունիքի մարզում Լիճքի ջրամբարի կառուցման | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ | | | |
| 1 | **Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերություն** | **92 400 000** | **18 480 000** | **110 880 000** |

**Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և յուրաքանչյուր հայտի փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին**

---

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգի.

**Մասնակից <<Մոդուլ>> ՍՊԸ-ի կողմից աշխատակազմի մասին տվյալները՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 1.2-ով ներկայացված.**

Թիմի ղեկավար/Նախագծի ինժեներ՝ Մատիաս Ֆրից - բացակայում է՝ անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերը:

Թիմի ղեկավար/Նախագծի ինժեներ՝ Մանուկ Պապիկյանի և Հայսեր Պողոսյանի ղեկավարման փորձը չի համապատասխանում ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով հրավերով (այսուհետ՝ Հրավեր) <<Հիմնական փորձագետների>> համար սահմանված չափանիշին:

Ջրամբարների նախագծման ինժեներ/պայմանագրի մասնագետներ՝

Ջեմմա Զազյան - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս)) (Ցանկալի է 15, բայց առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ, այդ թվում՝ ջրամբարների նախագծման և/կամ շինարարության/վերահսկողության), (Ցանկալի է 15, բայց առնվազն 10 տարվա նմանատիպ նախագծերի շրջանակներում պայմանագրերի կառավարման և/կամ պահանջների վերլուծության և գնահատման մասնագիտական),

Արա Մուշեղյան – մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս) մասնագիտական), (Ցանկալի է 15, բայց առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ, այդ թվում՝ ջրամբարների նախագծման և/կամ շինարարության/վերահսկողության), (Ցանկալի է 15, բայց առնվազն 10 տարվա նմանատիպ նախագծերի շրջանակներում պայմանագրերի կառավարման և/կամ պահանջների վերլուծության և գնահատման մասնագիտական),

Աղետտա Առուստամյան - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 15, բայց առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ, այդ թվում՝ ջրամբարների նախագծման և/կամ շինարարության/վերահսկողության), (Ցանկալի է 15, բայց առնվազն 10 տարվա նմանատիպ նախագծերի շրջանակներում պայմանագրերի կառավարման և/կամ պահանջների վերլուծության և գնահատման մասնագիտական),

Հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման ինժեներ՝

Վահան Կոբելյան - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս)

Վիկտորիա Ավագյան - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին,

Սոցիալական և վերաբնակեցման հարցերի փորձագետ՝

Կարեն Դանիելյան - ներկայացված չէ որակավորումը հավաստող փաստաթուղթը

ԻՆԺԵՆԵՐ-ԷԼԵԿՏՐԱՄԵԽԱՆԻԿ

Գուրգեն Հովհաննիսյան – ներկայացված չէ որակավորումը հավաստող փաստաթուղթը:

**Մասնակից Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է.**

- ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ համաձայն **հավելված N1-ի,**
- առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին:

**Մասնակից Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում.**

Ընկերության կողմից ներկայացված Լիցենզիայում նախատեսված հատկանիշները համապատասխանում են արդյոք Հրավերով նախատեսված հատկանիշին («Հիդրոտեխնիկական օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հիդրոտեխնիկական կառույցներ և համակարգեր»), լիցենզիայում նշված ինտերնետային կայք էջի հղումը ակտիվ չէ,

Ընկերության կողմից ներկայացրած <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերում՝ պայմանագրերում հստակ չէ Հրավերով սահմանված նմանատիպ պայմանագրի կատարումը (Նմանատիպ են համարվում նոր ջրամբարների կամ այլ նմանատիպ պատվարների կառուցման, վերակառուցման, վերականգնման նախագծային աշխատանքները կամ ՀՀ կառավարության 31.07.2003թ N 957-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան առնվազն հինգ ջրամբարի անվտանգության հայտարարագրի (ԱՀ) կազմման ծառայությունները:): Պայմանագրերում կատարված աշխատանքները անհրաժեշտ է մանրամասնել՝ Հրավերի <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշի պահանջներին համապատասխան:

Թիմի ղեկավար/ Նախագծի ինժեներ մասնագետների ներկայացված չափանիշները չեն համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին:

Համաձայն Հրավերով սահմանված պայմանի, Հայտին կից փաստաթղթերի մի մասը (Հավելված 1.5 և այլն) ներկայացված չեն հայերեն (Հայտին կից փաստաթղթերը օտար լեզվով (ռուսերեն կամ անգլերեն) ներկայացվելու դեպքում՝ հայերեն համարժեք թարգմանությունները ապահովում է հայտատուն: Բնօրինակի հայերեն և այլ լեզվով ներկայացված տարբերակի միջև անհամապատասխանությունների դեպքում հայերեն լեզվով բնօրինակն ունի գերակայություն:)

Ընկերության կողմից ներկայացված աշխատակազմի մասին տվյալները՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 1.2-ով ներկայացված.

**Ջրամբարների նախագծման ինժեներ/պայմանագրի մասնագետ՝**

Մաջիդ Ֆաթեմի - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս) մասնագիտական փորձ չունի),

Մոհամադ Ալի Քարիմի - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս) մասնագիտական փորձ չունի), ներկայցված չէ անձնագրի պատճենը,

Մոհամադ Հասան Փեդարսանի - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս) մասնագիտական փորձ չունի), ներկայացված չէ որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Բեհրուզ Դորուդյան Մովահեդ - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս) մասնագիտական փորձ չունի), ներկայցված չէ անձնագրի պատճենը, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Ամիր Ֆաթեմի - - մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս)

մասնագիտական փորձ չունի), ներկայցված չէ անձնագրի պատճենը, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

**Ինժեներ երկրաբան/նյութագետ**

Մեհրդադ Սայարի Նեժադ -- մասնագիտական փորձը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին (Ցանկալի է 10, բայց առնվազն 5 տարվա միջազգային (իր բնակության երկրից դուրս) մասնագիտական փորձ չունի), ներկայցված չէ անձնագրի պատճենը:

Ջալալ Աթարի - ներկայցված չէ անձնագրի պատճենը, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Հասան Ռախշանիզադե - ներկայցված չէ անձնագրի պատճենը, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Ալիռեզա Ֆուդի - ներկայցված չէ անձնագրի պատճենը, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Սաջջադ Հաջի Հասանի – ներկայցված անձնագրի վավերականությունը ժամկետանց է, ինչպես նաև բացակայում է որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Խոդադադ Սաֆավի - ներկայցված անձնագրի վավերականությունը ժամկետանց է, ինչպես նաև բացակայում է որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Ադել Հադիդի - ներկայցված անձնագրի վավերականությունը ժամկետանց է,

Մեհրան Խաջեփուր - ներկայցված անձնագրի վավերականությունը ժամկետանց է,

Սաջջադ Հաջի Հուսանի - ներկայցված չէ անձնագիր,

Մեհրան Խուջեփուր - ներկայցված անձնագրի վավերականությունը ժամկետանց է

Համեդ Իման Ջոար - բացակայում է որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

**Մասնակից՝ ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացված.**

համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին տեղեկատվությունը համաձայն Հավելված 1.4-ի՝ հաստատված չէ և ներկայացված է թեր անհրաժեշտ է ներկայացնել վերջին 10 տարիների կատարված աշխատանքները,

<<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող ներկայացված պայմանագրերը չեն համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին,

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակցի կողմից առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները չեն համապատասխանում Հրավերի պահանջներին,

Արմեն Գրիգորյանի- ինքնակենսագրությունը հաստատված չէ, ներկայցված չէ անձնագրի պատճենը, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Սամվել Ջեյրանյան – ինքնակենսագրությունը ներկայացված չէ, ներկայցված անձնագրի պատճենը, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն) պետք է սկանավորված լինեն բնօրինակից կամ էլեկտրոնային ստորագրությամբ մասնակցի կողմից հաստատված,

Էդվարդ Մկրտչյանի- ներկայացված չէ ինքնակենսագրությունը և անձնագրի պատճենը,

Օֆելյա Գրիգորյանի -ինքնակենսագրությունը հաստատված չէ, ներկայցված չէ անձնագրի պատճենը, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայագիր և այլն),

Վիկտոր Բախտամյան – ինքնակենսագրությունը ներկայացված չէ, դիպլոմը և անձնագիրը բնօրինակից սկանավորված չէ, անհրաժեշտ է սկանավորված լինեն բնօրինակից կամ էլեկտրոնային ստորագրությամբ մասնակցի կողմից հաստատված,

Միքայել Գևորգյան - ներկայացված չէ ինքնակենսագրություն, համաձայնություն, որակավորումը հաստատող փաստաթուղթ և անձնագիր,

Արո Պողոսյան – դիպլոմ – ներկայացված չէ ինքնակենսագրություն և անձնագիր, որակավորումը հաստատող փաստաթուղթ անհրաժեշտ է սկանավորել բնօրինակից կամ մասնակցի կողմից հաստատել էլեկտրոնյին ստորագրությամբ,

Կարինե Մուշեղյան – Ավետիսյան – ներկայացված չէ ինքնակենսագրություն և անձնագիր, որակավորումը հաստատող փաստաթուղթ անհրաժեշտ է սկանավորել բնօրինակից կամ մասնակցի կողմից հաստատել էլեկտրոնյին ստորագրությամբ,

Տիգրան Այվազյան - ներկայացված չէ ինքնակենսագրություն, որակավորումը հաստատող փաստաթուղթ անհրաժեշտ է սկանավորել բնօրինակից կամ մասնակցի կողմից հաստատել էլեկտրոնյին ստորագրությամբ,

**Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:**

**Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:**

**Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ**

«ՁԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ:

Հանձնաժողովի որոշում.

Համաձայն «ՁԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն» ծածկագրով ընթացակարգի 8.9 կետի՝ հանձնաժողովը 14.10.2022թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակիցներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 17.10.2022թ. շտկել անհամապատասխանությունները:

17.10.2022թ մասնակից Ընկերությունները շտկման ծանուցմանն ի պատասխան ներկայացրել են փաստաթղթեր սակայն.

**ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ ՍՊԸ-ի** կողմից՝

<<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող ներկայացված պայմանագրերը չեն համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին,

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակցի կողմից առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները չեն շտկվել՝ համապատասխան Հրավերի պահանջներին:

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակցի կողմից առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների փորձառությունը չի համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին:

**Մասնակից Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերության կողմից չեն շտկվել հետևյալ անհամապատասխանությունները.**

<<Թիմի ղեկավար/ Նախագծի ինժեներ մասնագետների ներկայացված չափանիշները չեն համապատասխանում Հրավերով սահմանված չափանիշներին>> և

<<Համաձայն Հրավերով սահմանված պայմանի, Հայտին կից փաստաթղթերի մի մասը ներկայացված չեն հայերեն (Հայտին կից փաստաթղթերը օտար լեզվով (ռուսերեն կամ անգլերեն) ներկայացվելու դեպքում՝

հայերեն համարժեք թարգմանությունները ապահովում է հայտատուն: Բնօրինակի հայերեն և այլ լեզվով ներկայացված տարբերակի միջև անհամապատասխանությունների դեպքում հայերեն լեզվով բնօրինակն ունի գերակայություն:)>>:

**Հանձնաժողովի որոշման վերաբերյալ**

---

**Հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.10 կետը** (8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է) և սույն **Հրավերով** սահմանված պայմանը, այն է՝ **<<Ոչ գնային նվազագույն չափանիշները պարտադիր են (հրավերով սահմանված աշխատանքային փորձին, աշխատակազմին, ծառայության մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանի (պայմաններին)), հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է>> հանձնաժողովը որոշեց.**

1. Մերժել՝ ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ ՍՊԸ-ի և Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերության կողմից ներկայացված հայտերը:

2. Հաստատել <<Մոդուլ>> ՍՊԸ-ի գնահատման արդյունքները.

| **Խորհրդատուներ** | **Տեխնիկական առաջարկի միավորը** |
|---|---|
| **“Մոդուլ” ՍՊԸ** | **Միջին Գնահատական** |
| Չափաբաժին 1 | 87.75 |
| Չափաբաժին 2 | 87.66 |
| Չափաբաժին 3 | 88.55 |

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 6)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը (գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա)՝ հանձնաժողովը ընթացակարգի մասնակից «Մոդուլ» ՍՊԸ-ին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 26.10.2022 թվականին ժամը 14:15-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ):

Բանակցությունների համար ներկա մասնակցի կողմից նվազագույն գին ներկայացնելու նպատակով կտրամադրվի 3 (երեք) րոպե ժամանակ, որի ընթացքում կարող են լինել գնի իջեցումներ և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի կողմից նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով կփոխանցվի գնահատող հանձնաժողովի նախագահին, որը կհամարվի վերջնական: Վերջինիս կողմից դրանք կբարձրաձայնվեն, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կներկայացվեն էլեկտրոնային աղյուսակի տեսքով: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակցի ներկայացրած գնի, հրավերով սահմանված չափանիշների գնահատման հիման վրա որոշվում ու հայտարարվում է ընտրված մասնակից:

4. ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգի Չափաբաժին 4-ը և Չափաբաժին 5-ը հայտարարել չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

ներկայացվելու դեպքում՝ հայերեն համարժեք թարգմանությունները ապահովում է հայտատուն: Բնօրինակի հայերեն և այլ լեզվով ներկայացված տարբերակի միջև անհամապատասխանությունների դեպքում հայերեն լեզվով բնօրինակն ունի գերակայություն:)>>:

**Հանձնաժողովի որոշման վերաբերյալ**

---

**Հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.10 կետը** (8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է) և սույն **Հրավերով** սահմանված պայմանը, այն է՝ **<<Ոչ գնային նվազագույն չափանիշները պարտադիր են (հրավերով սահմանված աշխատանքային փորձին, աշխատակազմին, ծառայության մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանի (պայմաններին)), հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է>> հանձնաժողովը որոշեց.**

1. Մերժել՝ ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ ՍՊԸ-ի և Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերության կողմից ներկայացված հայտերը:

2. Հաստատել <<Մոդուլ>> ՍՊԸ-ի գնահատման արդյունքները.

| **Խորհրդատուներ** | **Տեխնիկական առաջարկի միավորը** |
|---|---|
| “Մոդուլ” ՍՊԸ | **Միջին Գնահատական** |
| Չափաբաժին 1 | 87.75 |
| Չափաբաժին 2 | 87.66 |
| Չափաբաժին 3 | 88.55 |

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 6)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը (գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա)՝ հանձնաժողովը ընթացակարգի մասնակից «Մոդուլ» ՍՊԸ-ին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 26.10.2022 թվականին ժամը 14:15-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ):

Բանակցությունների համար ներկա մասնակցի կողմից նվազագույն գին ներկայացնելու նպատակով կտրամադրվի 3 (երեք) րոպե ժամանակ, որի ընթացքում կարող են լինել գնի իջեցումներ և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի կողմից նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով կփոխանցվի գնահատող հանձնաժողովի նախագահին, որը կհամարվի վերջնական: Վերջինիս կողմից դրանք կբարձրաձայնվեն, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կներկայացվեն էլեկտրոնային աղյուսակի տեսքով: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակցի ներկայացրած գնի, հրավերով սահմանված չափանիշների գնահատման հիման վրա որոշվում ու հայտարարվում է ընտրված մասնակից:

4. ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով ընթացակարգի Չափաբաժին 4-ը և Չափաբաժին 5-ը հայտարարել չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

5. Տեղեկագրում հրապարակել հայտարարություն, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին՝ նշելով չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 26.10.2022թ. ժամը 14:15-ին, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-7, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ______________ | Խ. Ծառուկյան |
| անդամներ | ______________ | Բ. Զաքարյան |
| | ______________ | Գ. Մելիքսեթյան |
| | ______________ | Ա. Սիմոնյան |
| | ______________ | Ն. Ավետյան |
| | ______________ | Մ. Վարդանյան |
| | ______________ | Ս. Ալեքսանյան |
| Քարտուղար | ______________ | Ա. Սարգսյան |